

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դորա Սաքայան, «Նրանց քշում են անապատները...» Կլարա և Ֆրից Ջիգրիստ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, 424 էջ

ԵՊՀ հրատարակչությունը լույս է ընծայել Մոնրեալի ՄակԳիլ համալսարանի գերմանագիտական ամբիոնի ցկյանս պրոֆեսոր, ԵՊՀ պատվավոր դոկտոր Դորա Սաքայանի գրախոսվող գրքի հայերեն տարբերակը, որի գերմաներեն բնօրինակը հրատարակվել է 2016 թ.: Հեղինակը այն թարգմանել է նաև անգլերեն, որն արդեն պատրաստ է հրատարակման: Ստամբուլում Դ. Սաքայանի հսկողությամբ պատրաստվում է նաև թուրքերեն տարբերակը: Մեծ եղեռնի մասին իրավական արժեք ունեցող այս գիրքը մի վավերագրություն է, որը պարունակում է ականատեսների վկայություններ, ցուցմունքներ, որոնք պատմության հիշողությանն են հանձնել Հայոց ցեղասպանության ականատեսներ, շվեյցարացի ամուսիններ Ֆրից Ջիգրիստը և Կլարա Հիլթին:

Ցայսօր տարբեր լեզուներով հրատարակվել են Հայոց ցեղասպանության օտար ականատեսների բազմաթիվ հուշագրություններ, սակայն այդ իրադարձությանը նվիրված օրագրությունները, որպես կանոն, հազվադեպ են: Դ. Սաքայանը շվեյցարական արխիվներից ամենայն ջանասիրությամբ հավաքել և գոթերեն ձեռագրերից վերծանել է Ֆ. Ջիգրիստի և Կ. Հիլթիի օրագրությունները, որոնց հրատարակումը նշանակալից և կարևոր իրողություն է, քանզի երեք տարի շարունակ՝ 1915 թ. մայիսից մինչև 1918 թ. ապրիլ, ամեն օր ծանր ապրումներով նրանք գրառել են այն իրադարձությունները, որոնց ականատեսն են եղել:

Գրախոսվող աշխատությունն աչքի է ընկնում ինքնատիպ կառուցվածքով. հայ ժողովրդի ճակատագիրը ներկայացվում է երեք մարդու տեսանկյունից: Առաջին երկու մասերում («Կլարա Ջիգրիստ-Հիլթի. Օրագիր և զեկույց», «Ֆրիդոլին (Ֆրից) Ջիգրիստ-Հիլթի») անդրադարձ է կատարվում շվեյցարացի զույգի թողած օրագրություններին, իսկ երրորդ մասում («Հայկ(ագուն) Ա. Արամյան. Մեծ Եղեռնի Պատգամ: Հայոց Տանթեական: Քաւարան եւ Հրաշալի Յարութիւն»)՝ վերջինների օգնությամբ սպանդից մազապուրծ եղած հայորդի Հայկ Արամյանի գրքին, որը հրատարակվել է Բեյրութում 1970 թ.: Հայկ(ագուն) Արման Արամյանն ու իր կրտսեր եղբայրը 1894-1896 թթ. համիդյան կոտորածների ժամանակ կորցրել էին ծնողներին: Տասը

տարեկանում նրան որդեգրել էր Բեռն քաղաքի բնակչուհի Սեսիլ Բերնարը: Սույն աշխատության էջերում Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթինների և Հայկ Արամյանի գործերը շաղկապվում են, միահյուսվում՝ դառնալով Հայոց ցեղասպանությանն առնչվող մի ամբողջական վավերագրություն:

Կ. Հիլթիի օրագրում Հայոց ցեղասպանությանն առնչվող վկայություններն ի հայտ են գալիս բազմաթիվ այլ՝ առօրյա կյանքի մանրամասներում՝ նոր միջավայրի առաջին տպավորություններ, օրվա անցուդարձ, պատերազմական շրջանի զրկանքներ, կենցաղային դժվարություններ, համաճարակներ, կլիմայական դժվարին պայմաններ, խիստ գրաքննություն և այլն:

Պատմաբանների համար կարևոր է նաև հեղինակի օրագրության ժամանակահատվածը. այն ընդգրկում է Մեծ եղեռնի ընթացքը, այն է՝ սկզբից մինչև աստիճանական ավարտը: Ի տարբերություն այլոց՝ հեղինակին հաջողվել է ժամանակագրական ճշգրտությամբ փաստագրել Օսմանյան կայսրության հարավարևելյան հեռավոր շրջաններում այդ դեպքերի վճռորոշ պահերը:

Կ. Հիլթիի օրագիրը հարուստ է պատմությանը հայտնի անձանց անուններով: Նրանք նախևառաջ ամանոսյան տարածաշրջանի Բաղդադի երկաթուղու շինարարությունում պաշտոնավարող եվրոպացի ճարտարագետներն են՝ Վինքլերը, Մորֆը, Քյոփլերը, Լոյթենեգերը և այլք, որոնք բոլորը հոգով ու սրտով պաշպանել են իրենց հսկողության ներքո աշխատող հայերին, բայց, ցավոք, մեծ հաջողություններ չեն ունեցել:

Սույն օրագիրը մասնավորապես լույս է սփռում Առաջին աշխարհամարտի ժամանակ Բաղդադի երկաթգծի ամանոսյան հատվածի շինարարությունում աշխատող հայերի շահագործման և ոչնչացման պատմությանը, որը մինչ օրս բավարար չափով ներկայացված չէ: Ընթերցողը ծանոթանում է ոչ միայն Թուրքիայի հյուսիսից ամեն օր բռնի տեղահանված գաղթական հայերի թշվառ վիճակին, այլև, թեկուզ համառոտակի, հազարավոր հայ մասնագետների և շինարարների ողբերգական կյանքին, այն մարդկանց, որոնք ամբողջ ընտանիքներով Ամանոսի տարածաշրջանում աշխատել են ստրուկի վիճակում սոսկ հաց ու ջրի դիմաց և այնուհետև սպանվել:

Բաղդադի երկաթուղու շինարարության գերմանացի պատասխանատուները մեծ ջանքեր թափեցին, որպեսզի փրկեն հայերին՝ իբրև կարևոր մասնագետների ու բանվորների: Սակայն եթե Կ. Պոլսի դեսպանատունը, բացառությամբ մի քանի հոգու, անկարող եղավ պաշտպանել հայ ճարտարագետներին ոչնչացումից, ապա այդ ուղղությամբ երկաթուղու վարչության հնարավորությունները շատ ավելի նվազ էին:

Կ. Հիլթիի օրագրում 1916 թ. փետրվարի 19-ի արձանագրությունն այն մասին է, որ փոխգնդապետ Սիլվեստեր Բյոթրիխը անձամբ էր ժամանել Բաղդադի երկաթուղու շինարարության Իսլահիե կայանը՝ հանդիպելու ճարտարագետներ Յ. Վինքլերի և Ֆ. Զիգրիստի հետ, նրանց պարտադրելու, որ հայ աշխատավորների հեռացման և տեղահանման մասին իր հրաման-

ները անբեկանելիորեն կատարվեն: Նա օրագրում հաղորդում է, որ ամուսինը՝ Ֆրիցը, «ավելի հաճախ է գնում գրասենյակ: Իսկ այժմ շտապեցնում են հայերի ցուցակների կազմումը: Դեռևս հայտնի չէ, թե ում հնարավոր կլինի պահել: Սակայն երևում է՝ հայերի վտարման հարցը շատ խիստ բնույթ ունի» (էջ 160): Օրագրային գրառումներից բացահայտվում է, որ նրա ամուսինը ազդու լծակներ ուներ և գիտեր, թե երբ և որտեղ է կարելի դրանք օգտագործել: Նա իր թուրք բարձրաստիճան ծանոթներին դիմում էր՝ պաշտպանելու իր հսկողության ներքո գտնվող հայ աշխատողներին և նրանց ընտանիքներին: Կ. Հիլթին հպարտությամբ է հաղորդում իր ամուսնու բարեգործությունները, թե ինչպիսի անձնուրացությամբ է նա փրկում վտանգի մեջ հայտնված հայերին, արտաքսվող ընտանիքներին ապահովում դրամով և սննդով, հիվանդներին տեղավորում հիվանդանոցներում, ծնողազուրկ երեխաներին՝ որբանոցներում և այլն: Երբ ժանդարմները ներխուժում են Զիգրիստների բակը և նրանց ախոռից հայտնաբերում ու տանում են հայ պարտիզպանի ամուսնացած աղջկան, Ֆրիցը երեկոյան նրան կրկին հետ է բերում:

Թուրքիա ժամանելուն պես Զիգրիստ-Հիլթի գույզը առերեսվում է մարդկային ողբերգությանը՝ դառնալով «տեղահանված հայերի անվերջանելի երթերի» ակնատեսը, և իրեն պարտավորված զգում այդ մասին վկայելու: Ցեղասպանության սարսափելի տեսարանները պետք է մթագնեին նորապսակների մեղրամիսը, և նրանք իրենց ամբողջ կյանքի ընթացքում պետք է կրեին այդ ծանր ապրումների բեռը:

Ինչպես շատ ուրիշ շվեյցարացիներ, Ֆ. Զիգրիստը դեռևս 1910 թվականից աշխատում էր որպես Բաղդադի երկաթուղու՝ դեպի Հալեպ տանող մի հատվածի ճարտարագետ: 1915 թվականից նա ստանձնել էր Իսլահիե-Ռաջու հատվածի նախագծումն ու Ամանոսյան լեռնաշղթայի միջով անցկացվելիք 905 մետրանոց թունելի կառուցումը: Զիգրիստ-Հիլթի գույզի վկայությունները վերաբերում են ոչ թե Թուրքիայի հյուսիս-արևելքից, այլ իրենց պատմական հայրենիքից տեղահանված հայերին:

Կ. Հիլթին, որը դեռևս 1914 թվականից Շվեյցարիայում սկսել էր օրագիր պահել, Հայոց ցեղասպանության ընթացքին առնչվող վկայությունները հաղորդում է Օսմանյան կայսրությունում իր ապրած ժամանակաշրջանին վերաբերող հատվածում: Նա նկարագրում է Ամանոսյան լեռների խորշերով անցնող և դեպի անապատ քշվող հայ վտարանդիների մահվան երթերը, Քելերի, Կատմայի և Հալեպի ճամբարների ողբերգական վիճակը, Բաղդադի երկաթգծի շինարարությամբ զբաղված հազարավոր հայ աշխատավորների շահագործումն ու հետևողական ոչնչացումը:

Օրագրից բացի՝ Կ. Հիլթին մեզ թողել է հատկապես Հայոց ցեղասպանությանը նվիրված՝ «Ամառ 1915» վերնագրով ականատեսի իր վկայությունը (էջ 249-264), որտեղ նկարագրում է «ամիսներով իրենց տան առաջով անցնող

վտարանդի հայերի» հուսահատական վիճակն ու այդ սարսափելի իրադարձությանն առնչվող բոլոր արհավիրքները:

Ահա Կ. Հիլթիի՝ 1915 թ. ապրիլի 24-ի գրառման առաջին նախադասությունը. «Երկինքը միշտ իր ամենատխուր դեմքով է հանդես գալիս» (էջ 101): Պարզ է, որ նա այստեղ երկնքի տխրությունը առնչում է իր տրամադրությանը: Նա, անշուշտ, ոչինչ չգիտեր այն ողբերգության մասին, որը 1915 թ. ապրիլի 24-ին տեղի էր ունենում Կ. Պոլսում, որտեղ նորապսակները ճանապարհորդության ընթացքում կարճ ժամանակով պետք է կանգ առնեին, որպեսզի այնտեղից ուղևորվեին իրենց գործուղման բնակատեղին: Նա չգիտեր, որ ապրիլի 24-ի գիշերը նախ Կ. Պոլսում, ապա բոլոր հայաբնակ կենտրոններում սկսվել էր հայ մտավորականների՝ հայտնի գրողների, գիտնականների, հոգևորականների՝ Անատոլիայի այն ժամանակվա հայ առաջատար ընտրանու զանգվածային ձերբակալությունների, ապա նրանց անխտիր ոչնչացման առաջին ալիքը: Դրանով իսկ երիտթուրքական կառավարությունը գլխատում էր Անատոլիայի հայերին՝ ճանապարհ հարթելով ցեղասպանության միջոցով Օսմանյան կայսրությունում ամբողջ հայ բնակչության տեղահանության և բնաջնջման համար:

Օրագրի ուշադիր ընթերցողը հասկանում է, որ անտեղյակ Կ. Հիլթին միայն աստիճանաբար է ընկալում, թե ինչ է կատարվում իր շուրջը, և որ դա նախամտածված և ծրագրված ցեղասպանություն էր: Զարգացած և ընթերցասեր կինն ընթացքում ուսումնասիրում է պատմությունը և տեղեկանում, որ «վաղուց ի վեր այս ցեղը հակակրեղի էր իսլամին»: Օրագրի երկրորդ կետում մենք արդեն տեսնում ենք բոլորովին այլ հեղինակի, որը, զայրույթով և նույնիսկ սոսկումով համակված, ունի միայն մեկ երազ՝ օր առաջ հեռանալ այդ «գարշելի երկրից»: Մի կողմից նա իրեն երջանիկ էր զգում իր ամուսնու և նորածնի հետ, մյուս կողմից՝ տառապում իր շրջապատում կատարված արհավիրքներից, անասելիորեն զգում հայրենիքի կարոտը և երագում օր առաջ հեռանալ սոսկալի Թուրքիայից: 1916 թ. մայիսի 13-ին նա գրում է. «Ահավոր օրեր են, և դառնությամբ ենք լցված այս անիծյալ Թուրքիայի հանդեպ» (էջ 176): Իսկ հունիսի 16-ին փաստում է. «Վիշտը ճնշում է մարդուն, և միայն մեկ միտք է գերիշխում՝ հեռանալ այս գարշելի երկրից» (էջ 184):

Այդ նույն Կ. Հիլթին, երբ 1916 թ. հունիսի 13-ին հղի վիճակում հանգստանում էր՝ իր անկողնուն պառկած, խիզախորեն թույլատրում է, որ հայորդի Հայկ Արամյանը թաքնվի իր մահճակալի տակ՝ խուսափելով ժանդարմների հալածանքներից:

Այսպիսով՝ քննարկվող օրագրությունում ծավալվող իրադարձությունների և իրողությունների կիզակետում հայերի համար օրհասական դարձած Բեռլին-Բաղդադ երկաթուղին է, որը պետք է Եվրոպան կապեր Պարսից ծոցին՝ դառնալով դեպի բրիտանական հզոր կայսրության մարզարիտը, մինչդեռ դարձավ Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայերի համար մահվան ուղի: Ժամանակակից գրականության մեջ Բաղդադի երկա-

թուղու պատմությունը հաճախ է օգտագործվում իբրև պատմական իրողություններից շեղելու միջոց: Հայոց ցեղասպանությունը ժխտողների, այդ թվում՝ պաշտոնական Թուրքիայի համար այդ թեման չափազանց ձեռնտու է՝ բուն եղելություններից խույս տալու համար: Չէ՞ որ այդ հեղինակավոր ծրագիրը ներկայացվում է որպես գերմանական իմպերիալիզմի խորհրդանիշ՝ անշուշտ, բազմաթիվ տարբերակներով, որոնց առնչություններում գաղափարական առումով լավագույնս քողարկված են Նամիբիայի հերերո ու նամա ցեղերի և հայերի դեմ բնաջնջման գործողությունները: Այս տեսանկյունից գնահատելով գրքի հրատարակումը՝ միանշանակ կարելի է փաստել, որ այն կարող է կարևոր դերակատարում ունենալ պատմական ճշմարտությունների վերհանման առումով: Այն մեծ ներդրում է Հայոց ցեղասպանության և դրա գլխավոր մեղադրյալների ու մեղսակիցների ամբողջական պատկերը գիտականորեն մշակելու և հիմնավորելու շարունակվող աշխատանքում:

Այսպիսով՝ Կ. Հիլթիի փաստաթղթային արժեք ունեցող օրագիրը անգնահատելի ավանդ է Հայոց ցեղասպանության պատմության համար: Ուստի այս գրքով Դորա Սաքայանը հարստացնում է Հայոց ցեղասպանության պատմությունը մի նոր ու արժեքավոր վավերագրությամբ, որը կարող է կարևոր դեր ունենալ այդ իրադարձության միջազգային ճանաչման գործընթացում:

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ներկայացվել է 19.10.2019

Ընդունվել է տպագրության 05.11.2019